ԳՈՂԳՈԹԱՆ – ԱՀԱ ԱՍՏԾՈՒ ԳԱՌԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՀՈՎ. 3.13-21

Հով. 3.9 – Նիկոդեմոսը հարցրեց ու նրան ասաց. «Դա ինչպե՞ս կարող է լինել»:

14 Եվ ինչպես Մովսեսն անապատում օձին բարձրացրեց, այնպես էլ Մարդու Որդին պետք է
բարձրանա. 15 Որ ով Նրան հավատում է, հավիտենական կյանք ունենա: 16 Որովհետեւ Աստված
այնքան սիրեց աշխարհը, որ իր միածին Որդուն տվեց, որպեսզի ով նրան հավատում է, չկորչի, այլ
հավիտենական կյանք ունենա: 17 Որովհետև Աստված իր Որդուն աշխարհ չուղարկեց՝ դատելու
աշխարհը, այլ որպեսզի Նրա միջոցով աշխարհը փրկվի: 18 Ով նրան հավատում է, չպիտի
դատապարտվի, իսկ ով նրան չի հավատում, արդեն դատապարտված է, որովհետև չհավատաց
Աստծու միածին Որդու անվանը:

Թվոց 21.5 – 5 Եվ սկսեց խոսել Աստծու և Մովսեսի դեմ՝ ասելով. «Ինչո՞ւ մեզ հանեցիք Եգիպտոսից,
որ անապատում մեռնենք. որովհետև ո՛չ հաց կա, ո՛չ ջուր, և մենք զզվել ենք այս խղճուկ սննդից»: 6
Տերը թունավոր օձեր ուղարկեց ժողովրդի վրա, որոնք խայթեցին մարդկանց, այնպես որ
Իսրայելից շատ ժողովուրդ մեռավ:

7 Ժողովուրդը եկավ Մովսեսի մոտ և ասաց. «Մենք մեղանչեցինք Տիրոջ և քո դեմ խոսելով: Աղոթի՛ր
Տիրոջը, որ մեզանից հեռացնի այդ օձերը»: Մովսեսն աղոթեց ժողովրդի համար: 8 Տերն ասաց
Մովսեսին. «Մի թունավոր օ՛ձ պատրաստիր և այն դի՛ր մի ձողի վրա. ով որ խայթվի և նայի այդ
օձին, կփրկվի»: 9 Մովսեսը պղնձե մի օձ պատրաստեց և այն դրեց ձողի վրա: Երբ որ օձը մեկին
խայթում էր, նա նայում էր պղնձե օձին և առողջանում էր:

I. ԽԱՉԸ ՄԱՐԴԿԱՆՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ :

14 Եվ ինչպես Մովսեսն անապատում օձին բարձրացրեց, այնպես էլ Մարդու Որդին պետք է
բարձրանա. 15 Որ ով Նրան հավատում է, հավիտենական կյանք ունենա:

- *Բանն այն է, որ ողջ սուրբ գրության ընթացքում օձը բացասական կերպար ունի: Այնուամենայնիվ, Հովհաննես 3.14-ում մենք տեսնում ենք արդյունքի դրական ազդեցությունը:*

Ինչո՞ւ է բրոնզե օձը օգտագործվում Թուոց 21.8–9-ում իսրայելացիներին փրկելու համար, և ինչո՞ւ որոշ մարդիկ չհավատացին:

Ա Կոր. 1.18 – Քանզի խաչի քարոզը կորուսյալների համար հիմարություն է, բայց մեզ՝ փրկվածներիս համար Աստծու զորություն է:

- ***Հովհաննես 3.14-ում Հիսուսը նշեց, որ այս բրոնզե օձը Նրա վերջնական գործի նախապատկերն էր: Օձը, որը մեղքի և դատաստանի խորհրդանիշն է, բարձրացրին երկրից և դրեցին մի ծառի վրա, որը անեծքի խորհրդանիշ էր (Գաղատացիս 3.13): Բարձրացված օձը և անիծվածը խորհրդանշում էր Հիսուսին, ով հանում է մեղքը բոլոր նրանցից, ովքեր հավատքով կնայեն Նրան, ճիշտ այնպես, ինչպես իսրայելացիները պետք է նայեին բարձրացված բրոնզե օձը անապատում:***

Ծննդոց 3.14-15 – Տեր Աստված ասաց օձին. Քանի որ դու արեցիր այդ, անիծյալ լինես բոլոր անասունների և դաշտի բոլոր կենդանիների մեջ. փորիդ վրա գնաս և հող ուտես կյանքիդ բոլոր օրերին: Ես թշնամություն եմ դնում քո և կնոջ միջև, քո սերնդի և նրա սերնդի միջև. նա քո գլուխը կջախջախի, իսկ դու կխայթես նրա գարշապարը:

- ***Պողոսը հիշեցնում է Գաղատացիներին, որ Հիսուսը դարձավ անեծք մեզ համար, թեև Նա անարատ և անմեղ էր՝ Աստծո անբիծ Գառը:***

ԱՂՈԹՔ՝ ԱՆԵԾՔԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ես հռչակում եմ, որ «Քրիստոսը մեզ փրկագնեց Օրենքի անեծքից՝ մեզ համար անեծք դառնալով (որովհետև գրված է, թե. «Անիծյալ է նա, ով կախվում է փայտից» (Գաղատացիներին 3.13):

1. Տեր Հիսուս Քրիստոսի անունով ես հիմա բերում եմ Նրա խաչի, մահվան, արյան և զոհի, Նրա հարության, կյանքի և դատարկ գերեզմանի, Նրա իշխանության, իրավունքի և տիրակալության ամբողջությունը: Ես բերում եմ Տեր Հիսուս Քրիստոսի կողմից դատապարտություն ցանկացած չար ուժերի, կախարդության, թուղթ ու գրի և անեծքի վրա: Ես բերում եմ ինձ համար խաչված Հիսուս Քրիստոսին ընդդեմ բոլոր անեծքներին, որ եղել են իմ հանդեպ՝ գրված, խոսքով կամ առանց խոսքի, կամ ինձ փոխանցված:

2. (Եթե դու գիտես, որ կան կոնկրետ անեծքներ, օգտակար կլինի անունով նշել դրանք: Օրինակ՝ «մահվան բոլոր անեծքները» կամ «իմ ամուսնության կամ առողջության վրա եղած բոլոր անեծքները» և այլն):

3. Հիսուս Քրիստոսի անունով ու արյունով ես քանդում եմ բոլոր անեծքների իշխանությունն ու կապանքները, որոնք եկել են ինձ՝ մեկ այլ մարդու կողմից փոխանցվելով կամ ասված խոսքերի միջոցով: Հիսուս Քրիստոսի արյունով ես ազատ եմ: Շնորհակալ եմ, Հիսուս, ինձ ազատելու համար: Ես հրամայում եմ, որ այս բոլոր անեծքներն ու իմ հանդեպ պահանջները հիմա կատարելապես զինաթափվեն և քանդվեն Հիսուս Քրիստոսի անունով և Նրա արյան զորությամբ:

4. Հիսուս Քրիստոսի անունով ես հրամայում եմ բոլոր դիվային ոգիներին, որոնք մուտք են ունեցել իմ հանդեպ անեծքների և ծեսերի միջոցով, հեռանալ և չքվել իմ ու իմ ընտանիքի կյանքից, Տեր Հիսուս Քրիստոսի ամենակարող անունով:

5. Հիմա ես հռչակում եմ բոլոր հոգևոր օրհնությունները, որ Իմ Երկնային Հայրը տվել է ինձ Հիսուս Քրիստոսի միջոցով (Եփեսացիների 1.3): Ես հռչակում եմ այդ բոլոր օրհնությունները բոլոր անեծքների փոխարեն, Տեր Հիսուս Քրիստոսի անունով և իշխանությամբ ու զորությամբ: Հիսուս, թող հիմա այս բոլոր բաներն ամբողջությամբ իրականանան Քո ամենակարող անունով: Ես Քեզ եմ բարձրացնում շնորհակալությունը, պատիվն ու փառքը: Այս բոլորը ես աղոթում եմ մարմնով եկած Նազովրեցի Հիսուս Քրիստոսի ամենակարող անունով և իշխանությամբ:

II. ԽԱՉԸ ԲՈՒԺԵԼՈՒ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ:

- ***Փրկությունն ու բժշկությունը խաչի վրա են:***

Մատթեոս 8.14-17 – 14 Երբ Հիսուսը Պետրոսի տուն եկավ, տեսավ նրա զոքանչին՝ ջերմության մեջ պառկած: 15 Հիսուսը բռնեց նրա ձեռքից, ու ջերմությունը նրան թողեց: 16 Նա վեր կացավ ու ծառայում էր նրանց: Երբ երեկո եղավ, Հիսուսի մոտ շատ դիվահարների բերեցին, և նա խոսքով հանեց ոգիներին ու բոլոր հիվանդներին բժշկեց, 17 որպեսզի իրականանար Եսայի մարգարեի միջոցով ասվածը. Նա մեր հիվանդությունները վերցրեց ու մեր ցավերը կրեց (Ես. 53.4ա):

Սաղ. 103.1-5 – 2 Օրհներգի՛ր Տիրոջը, ո՛վ անձ իմ, և մի՛ մոռացիր նրա բոլոր բարիքները. 3 Որ ներում է քո բոլոր մեղքերը, բժշկում է քո բոլոր ցավերը...

- ***ԱՍՏԾՈ ՈՒՂԻՆԵՐԸ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ***

Հիվանդություն և տկարություն – Սաղմոս 41.3

Սաղ 41.3 – Տերը կմխիթարի նրան տկարության անկողնում. դու նրա ամբողջ անկողինը կփոխես իր հիվանդության ժամանակ:

Ազատագրում – Ղուկաս 8.35

Ղուկաս 8.35 – Եվ մարդիկ դուրս ելան պատահածը տեսնելու, եկան Հիսուսի մոտ ու գտան այն մարդուն, որից դևերը ելել էին, Հիսուսի ոտքերի մոտ նստած, հագնված ու զգաստացած, և վախեցան:

Զգացմունքային տառապանք – Սաղմոս 147.3

Սաղ. 147.3 – Նա բժշկում է կոտրած սիրտ ունեցողներին և փաթաթում է նրանց խոցերը:

Անհանգստություն կամ մտահոգություն –Հովհաննես 14.27

Հով. 14.27 – Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ես այն ձեզ չեմ տալիս, ինչպես աշխարհն է տալիս. ձեր սիրտը թող չխռովվի ու չվախենա:

- ***ԲՈՒԺՈՒՄ ԿԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ - ՀՈՎՀԱՆՆԵՍ 11.1–4***

Ես մեծ հույս եմ գտնում այս հատվածի և Հիսուսի արածի/խոսքերի մեջ: Անկախ նրանից, թե մենք այսօր տեսնում ենք խաչի բուժիչ զորությունը բժշկության միջոցով, թե երբ հանդիպում ենք Հիսուսին դեմ առ դեմ, մենք վստահություն ունենք, որ անպայման զգալու ենք Հիսուսի բուժիչ հպումը:

«Նրա վերքերով մենք բժշկվեցինք» խոստումը յուրաքանչյուր հավատացյալի համար է:

III. ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՄԻՇՏ ՆԱՅԵՆՔ ԽԱՉԻՆ:

Եբր. 12.2 – 2 Նայենք հավատի զորագլխին ու այն կատարողին՝ Հիսուսին, որն իր առջև դրված ուրախության փոխարեն խաչը հանձն առավ և ամոթն արհամարհելով՝ Աստծու աթոռի աջ կողմում նստեց:

Կող. 2.14-15 – 14 Եվ ջնջեց մեր դեմ դատավճռի ձեռագիրը և այն մեջտեղից վերացրեց ու խաչափայտին գամեց, 15 իշխանություններին և պետություններին մերկացնելով՝ հայտնապես խայտառակեց ու նրանց հաղթեց իրանում.

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ